ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Դեպի ներառական Հայաստան

Իրականացման ժամանակահատված: 01.09.2020 - 30.04.2023

ԱլԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 299 920

Իրականացնող կազմակերպություն(ներ):

“Agate” Rights Defense Center for Women with Disabilities on behalf of the Coalition for Inclusive Legal Reforms

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/CoalitionforInclusiveLegalReforms/,

Նախագծի կայքէջ: coalition.am/

Նախագծի նկարագրություն:

«Դեպի ներառական Հայաստան» ծրագիրը համահունչ է դրամաշնորհի գլոբալ նպատակին, որն է՝ ժողովրդավարական բարեփոխումների և մարդու իրավունքների համընդհանուր օրակարգերի խթանումը՝ Հայաստանում կոալիցիաների հզորացման միջոցով:
Ծրագիրը կբարելավի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները Հայաստանում, քանի որ այն կաջակցի ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հզոր կոալիցիա, որը համակարգված կերպով կջատագովի ներառական օրենսդրության համար, կմշտադիտարկի օրենքների արդյունավետ կիրարկումը և կօգտագործի մարդու իրավունքների միջազգային մեխանիզմները, ինչպիսին է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (CRPD), որպեսզի ստիպի մեր կառավարությանը կատարել իր ստանձնած պարտավորությունները:
Ծրագրի թիրախային խումբը հաշմանդամություն ունեցող անձինք են, նրանց ընտանիքի անդամները, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, սոցիալական աշխատողները, իրավաբանները, կրթական և առողջապահական ոլորտի մասնագետները:
Ծրագրի հիմնական շահառուները հաշմանդամություն ունեցող անձինք են:
Ծրագիրը կջատագովի և կուղղվի հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը:

Ակնկալվող արդյունքներ:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.
Արդյունք 1. Հզոր և կայացած Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա, որն ընդգրկված է Հայաստանում մարդու իրավունքների հետ կապված բոլոր նախաձեռնություններում, օրենսդրության և քաղաքականությունների մշակման մեջ:
Արդյունք 2. Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության և հավասար իրավունքների խթանմանն ուղղված ուժեղ առաջարկությունների և քաղաքականությունների ներկայացում:
Արդյունք 3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 2017-2020թթ. իրականացման վերաբերյալ այլընտրանքային զեկույցի ներկայացում, որը կներառի հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր իրավունքները:
Արդյունք 4. Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի անդամ կազմակերպությունների կողմից իրականացվող ջատագովության գործողություններ՝ ուղղված կրթությանը, հաշմանդամություն ունեցող կանանց սեռական և վերատադրողական առողջության իրավունքին, ներառական սպորտին, մատչելիությանը, լսողության և տեսողության խնդիրներ անձանց, մտավոր և հոգեբանա-սոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին և հնարավորություններին, զբաղվածությանը, երեխաների իրավունքներին, ծնողական աջակցության խմբերին և այլն:
Արդյունք 5. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ջատագովության նպատակով ստեղծված հզոր